

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**  
**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 26/1**

ք.Երևան

15 մայիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով վճարման ենթակա ԱԱՀ-ի տոկոսադրույքը վերանայելու վերաբերյալ քաղաքացի Վահագն Վարդանյանի դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

**1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները**

Վահագն Վարդանյան հայտնում է, որ Ճապոնիայից 2017 և 2018թթ. ներմուծել է ավտոմեքենաներ, որոնց մի մասը վաճառել է:

2017թ. ամեն եռամսյակը մեկ Վահագն Վարդանյանը վճարել է վերոնշյալ ավտոմեքենաների համար նախատեսված ԱԱՀ-ը՝ 16,7% և չի խուսափել վճարումները կատարելուց:

Վերջին անգամ Վահագն Վարդանյանը ԱԱՀ մուծել է հունվարի 20-ին Շենգավիթ համայնքի հարկային տեսչությունում, որտեղ հարցրել է օրենքների փոփոխության և իր հարկը մուծելու կարգի մասին: Իրեն պատասխանել են, որ ոչինչ չի փոխվել և նա շարունակելու է նույն կերպ մուծել ԱԱՀ՝ ամեն եռամսյակը մեկ: Ինչից հետո հունվար և փետրվար ամիսներին Վահագն Վարդանյանն այցելել է Շենգավիթի հարկային տեսչություն, քանի որ լսել էր օրենքի՝ չիմնավորված փոփոխության մասին:

Ս.թ. ապրիլի 4-ին Վահագն Վարդանյանն այցելել է սպասարկման թիվ 6 բաժին (Շենգավիթ)՝ մյուս եռամսյակի վճարումը կատարելու համար, սակայն տեղում իրեն հայտնել են, որ օրենքի փոփոխություն է տեղի ունեցել, ինչի պատճառով այժմ պետք է վճարի վաճառված ավտոմեքենաների 20%-ի չափով: Նոր օրենքի մասին հարկային տեսուչները տեղեկացվել են միայն մարտի 10-ին, որի պատճառով անիրազեկ է եղել նաև Վահագն Վարդանյանը:

Քանի որ իրազեկված չի եղել օրենքի փոփոխության մասին, այդ պատճառով Վահագն Վարդանյանը խնդրում է թույլ տալ շարունակել մուծել ԱԱՀ առնվազն երկու եռամսյակ 16,7%-ի չափով՝ ներմուծված ավտոմեքենաների համար:

**2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

Վահագն Վարդանյանը հանդիսանում է ինքնուրույն հարկ վճարող և հարկային մարմնում հաշվառվել է 07.06.2017թ.: Վահագն Վարդանյանը զբաղվում է ՀՀ տարածք ավտոմեքենաների նորմուծմամբ և վաճառքով:

Վահագն Վարդանյանը հարկային մարմին է ներկայացրել ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքների մասով ԱԱՀ-ի հաշվարկներ 2017թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների համար: Նշված հաշվարկներով Վահագն Վարդանյանի կողմից վճարվել է ընդամենը 263.262 դրամ ԱԱՀ:

### 3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում անձնական, ընտանեկան կամ տնային օգտագործման գույք (բնակարան, առանձնատուն (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հող, ավտոտնակ, ավտոմեքենա) նույն տեսակի գույքի՝ տարվա ընթացքում երկրորդ և ավելի թվով օտարումը, եթե դրանց և՛ ձեռքբերումը, և՛ օտարումը տեղի է ունեցել մեկ տարվա ընթացքում:

ՀՀ հարկային օրենսգրքի 150-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դեպքում գույքի օտարումից ստացվող ամբողջ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է քսան տոկոս դրույքաչափով:

Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքի 153-րդ հոդվածով սահմանված դեպքերում ֆիզիկական անձինք (անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն) մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի տարեկան հաշվարկներ:

Օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքի 153-րդ հոդվածով սահմանված դեպքերում ֆիզիկական անձինք (անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն) Օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա եկամտային հարկի գումարները պետական բյուջե են վճարում Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ:

Վերոգրյալից հետևում է, որ Վահագն Վարդանյանը ՀՀ տարածք ներմուծված ավտոմեքենաների իրացումից 2018թ. ընթացքում ստացված եկամուտները պետք է հաշվարկի, վճարի և հայտարարագրի վերը նշված իրավանդումերով նախատեսված կարգով:

Ինչ վերաբերվում է բողոքով բերված միջնորդությանը՝ ներմուծված ավտոմեքենաների համար ԱԱՀ-ն 20%-ի փոխարեն 16.67% դրույքաչափով վճարելու վերաբերյալ, ապա հարկ է նշել, որ Օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հարկի դրույքաչափի նվազեցումը համարվում է հարկային արտոնության տեսակ, որը նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն սահմանվում է բացառապես Օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով:

### 4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Վահագն Վարդանյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**